

Զ. ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻԶԵՎԱՆՅԱՆ ԶՎԱՐՃԱԽՈՍՆԵՐ

1(205). ՍԵՎԵՐՆԵՑՈՒ ՆԱՍՍԿԸ

Մի սևքարեցի քյունը ա բանակ: Դե հասցե, պուն գիղըն չի: Նամակ ա կյորըն իրանց տուն ու կյորըն. «Սևքար, կաղնի ծառ, կիտած քար, ստանա իմ ապին»:

2(206). ԷՇԻՆ, ԹԵ՞ ՄԱՇԻՆԻՆ

Մի հատ մարթ իշով ճամփա քյունվիս ա ըլըմ: Մի մաշին կյալիս ա կաղնըմ, շոֆերն ասըմ ա.- Էտ խի՞ ես էշով քյունըմ, արի մաշինին նստի:

Մաշինին նստըմ ա: Մի վախտ շոֆերը մտիկ ա անըմ տենըմ էս մարթը էշի վրա ա նստել:

Ասըմ ա.- Էտ խի՞ ես իշին նստել:

Թե.- Ավտոյըմը սիրտըն խառնըմ ա:

Որ մաշինից վեր ա կյալիս, շոֆերն ասըմ ա.- Դե փողս տուր:

- Այ մարթ,- ասըմ ա,- ես իմ իշին ի նստել, քեզ ի՞նչ փող տամ:

Ասըմ ա.- Եղի՛շ, բա քեզ ասեցի ո՞չ, որ նստես ո՛չ:

Ասըմ ա.- Այ ախպեր, ասողին էլ լսող ա պետք:

4(208). ԱՆՍԻԳՆԱԼ ՄԱՇԻՆԸ

Սաքո դային էշով կյալիս ա ըլել: Մի պուճուր մաշին եկել ա մոտացել թե չէ, Սաքո դային ասել ա.- Դա՛, շան տղա, մաշինս տակը չքցես, տենըմ չե՞ս մաշինս սիգնալ չունի:

5(209). ՄՆԻԹԱՐՈՐ ԴԱՐԵՎԱՆԸ*

Մի վիրիադղանցի ընգըմ ա ճըրֆորը մեռնըմ: Դմի տանցեք իվաքված լաց են ըլըմ: Մի հարևան մտնըմ ա ասըմ.

- Լաց միք ըլի, լաց միք ըլի: Բա որ ավտոյի, տրակտորի տակ էր ընգել՝ շան փայ ըլել, լռվ կըլե՞ր: Լաց միք ըլի:

6(210). ԱՆՇՈՐ ԿՆԻԿԸ*

Մի կնիկ մի սիրեկան ա ունենըմ, էտ սիրեկանը իրանց տանն ա ըլըմ, մըն էլ տենըմ ա մարթը կյալիս ա, սիրեկանին գարդիորքն ա կոխըմ: Մարթը կյալիս ա տենըմ՝ կընգա հաքին մի հին շոր:

Ասըմ ա.- Էտ խի՞ ես էտ շորը հաքել, հրեն գարդիորքը լիքը քու շորերն ա:

Ասըմ ա.- Որդիա՞ն ա շորը, շոր չունեն:

Մարթը քյունը ա գարդիորքը պաց անըմ սկսըմ շորերը հաշվիլը:

- Մին, էրկու, իրեք, չորս, բարև Սաքո, հինգ, վեց, յոթ...

3(207). ԱՍՈՂԻՆ ԷԼ ԼՍՈՂ ԱՊԵՏԷ

Մի անգամ Կյուցեցի Եղիշը մի ավտո յա կըղնցնըմ, ասըմ ա.- Ախպեր քան, ինձ տար էս ինչ տեղը:

Թե.- Չէ՛, Եղիշ քան, կարալ չեն:

Ավտոն շարժվըմ ա թե չէ, Եղիշը պըրցընըմ ա կուզովը: Որ տեղ ա հասնըմ, կաթինկի կըլխին տալիս ա, որ մաշինը կաղնի: Շոֆերը գարմանըմ ա, թե. «Ես մարթ չեմ վե կալել, էս ո՞վ ա թակըմ»: Ավտոն կըղնցնըմ ա, տենըմ ա՝ Եղիշն ա:

7(211). ՈՎ ԴԻ ՈՒՏԻԼ

Մի մարթ ա ըլըմ, հիվանդանըմ ա: Տղեն քյընըմ ա ասըմ.- Ապի, բա ի՞նչ ես ուզըմ:

Ասըմ ա.- Բալա ջան, խյար եմ ուզըմ:

Համա ծինը տուռը կտրած ա ըլըմ, խյար ո՞րդիան ճարի: Բյընըմ ա աշխար-աշխար ման ա կյալի, վերջը որ շատ ման ա կյալի, քյընըմ ա մի տեղ դարդը պատմըմ, պիրըմ են էտ մարթին մի քանի հատ խյար են տալիս: Ծեռին սումկա չի ունենըմ, որ էտ խյարը լցնի մեջը: Պիրըմ ա մի շալվար առնըմ, փոխկերքը կապըմ ու էտ խյարը լցնըմ փոխկերքի թարը: Կյալիս ա իրանց տուն, կյալիս ա տենըմ ապին մեռել ա: Ու տղեն սկսըմ ա հոր վրա լաց ըլիլը:

- Վա՛, ապի ջան, շըլվարիս միչինըմ ո՞վ դի ուտիլ, բա քե հմար ի պիրել:

ԴԻՏԱՎԱՆՑԻՆԵՐ

Բաննահանց Հանեսը Հարքից

8(212). ԱՊԻՆ ԿՅԱԼԻՍ Ա

Բաննահանց Հանեսը¹ իրանց եզները ըրծըցնիլու վախտը ադոգուլ անըմ ա, մի կել կյալիս ա տրանց Զորքռզին² վեր կոխըմ ուտըմ: Հանեսը տենըմ ա, որ կելը Զորքռզին վեր ա կոխել, հմի ի՞նչ անի, ճարը կտրըմ ա, ասըմ ա.

- Կիլա՛ն ջան, կիլա՛ն, լեղո կերեք, ապին կյալիս ա՛:

9(213). ԿԱՐԸՄ ԶԵՆԵ, ԴԸՍԱՐԱՐ ԶԵՆԵ

Բաննահանց Հանեսը ուզըմ ա արեշիկին դոնաղ տանի: Կանջըմ ա, իրանց կըլխատան

¹ Բաննահանցների տոհմը Դիտավան գյուղում հիմնադրված վերջին տոհմերից է ծագումով Արևմտյան Հայաստանից: Բաննահանց Հանեսն ապրել է XIX դ. վերջում- XX դ. սկզբում, և նոր սերունդը չի տեսել նրան (ծանոթ. բանահավաքի):
² Զորքռզ - եզան անունը (ծանոթ. բանահավաքի):

սոխախկըմը կաղնըմ ա արեշիկը, ինքը տուն ա մտնըմ, համիկին թե.

- Այ ախճի, էն մարթին պիրել եմ, վե կաց մի պա՛ն շինի, դոնաղ անենը:

- Ի՞նչ շինեմ, ի՞նչ ունենք, որ ի՞նչ շինեմ: Բյնա, ոնց որ էկել ես, նենց էլ քյնա, մի գատ էլ ա կա ո՛չ, քյնացեք, տուն չի մտնեք:

Խեղճ Հանեսը ճարը կտրած տուս ա կյալի սոխախկը:

- Ուզբաշի ջան, կարըմ չե՛նք, դըմանըմ չե՛նք:

10(214). ՀԱՆԵՍԸ ՀՈՎԻՎ

Բաննահանց ոչխարը միշտ Պետոն էր պահըմ: Մի օր Պետոն կարըմ չի ոչխարը քյնա, Հանեսին են դարզըմ: Պահ են տալի, որ.

- Ոչխարը, որ տենաս ստըմ ա, վեր ա կե-նըմ ծնըմ ա, իմաց արա:

Տա ոչխարը դիր անըմ ա Հացուտի կըլխովը, Ծըմծըմանովը կյալիս են, դե կերած ոչխար, Խաչուտ թալեն³ են հասնըմ թե չէ, դիփ ստըմ են: Հանեսը փափախը վեր ա ունըմ ծեն տալի.

- Պետո՛, Պետո՛, սեղը լըծի կյա՛, ոչխարնին չիմ ծնըմ են, սեղը լըծի կյա՛:

11(215). ԱՍՏԴԻ ՊԱՋՈՒԿԸ

Բաննահանց Հանեսը իրան տղին՝ Թևոյին ասըմ ա.

- Ա՛ գեղա Թևո՛, մի տուս արի տես Պաճուկը՛⁴ տուս ա եկել:

Թևոն ճըրաքը վառըմ ա քյնըմ ճակնդեղի լաքի էս կողմովը, էն կողմովը ման կյալի, տես տուս չի եկել: Կյալիս ա, ասըմ ա.

- Ապի՛, հլա՛ տուս չի եկել:

³ Հացուտ, Ծըմծըման, Խաչուտ թալա - Դիտավան գյուղի հանդամասերից, գտնվում են գյուղից վերև դեպի Համզի քարը (ծանոթ. բանահավաքի):

⁴ Հանեսը նկատի է ունեցել Բազումը աստղային համաստեղությունը, որի բարբառային արտասանությունը նա աղավաղել է և Պաճումի փոխարեն ստացվել է Պաճուկ, այսինքն բազուկ (ճակնդեղ) (ծանոթ. բանահավաքի):

- Ա, ո՞ր Պապուկն եմ ասը:
- Դե եմ, որ ցանկե եմք էլի:
- Ի՞, կլիւիւտ մեռնի, աստղի Պապուկն եմ ասը, աստղի Պապուկը:

12(216). ԴԻՆԱՆԱԼՈՒ ՎԱՍԽԸ

Ամառվա եմ թե՛ հընձի վախտն ա ըլըմ՝ Զա-նեսն իրանց արտը հընձըմ ա, բափեն վեր տը-նըմ, բայց կարըմ չի խորցը կապի: Իրանց հարևանն է՝ Սուկուչը, իրան տղերանցովը հընձմ են, կապըմ են, մի վախտ Զանեսը, թե.

- Սուկուչ ապի՛, Սուկուչ ապի՛, մեր բափեն էլ կապի էլի:
- Ա՛ քու տունը քանդվի, բա մեր բափեն ո՞վ կապի, որ ծեր բափեն ես կապեմ:
- Զմի չեմ ասըմ, հմի, դինջանալու վախտը, դինջանալու վախտը կապի՛:

13(217). ԾԵՐ ՏՆԵՐԸՄՆ ԵՆ ՊԸՏԱԴԻ

Զանեսը մեռնըմ ա, տանըմ են թաղըմ, ետ են կալի, տանըմ նատած քելեխը տալիս են, ու-տըմ են: Մարթիք են էլի, որ կլիւխնին տըքա-նըմ ա. հանիկին կանչըմ են, թե.

- Խանըմ աքի՛ր, աստծով մըխիթարվեն, վե կալ էս ստաքանը, մի պլան էլ տու ասա:
- Է՛, ծեղ մատաղ, ի՞նչ ասեմ, էս թավուր - սուփրեքը ծեր տներըմն էլ պըտափի:

Բայրամանց Մաղոն շարքից

14(218). ՏԱՇԱԾ ԶԱՐԸ ՏԱՓԻՆ ԶԻ ՄԱՍ

Բայրամանց Մաղոն¹ տարին տասերկու ա-միս Սուկուչանց նյութարն էր, նրանց ոչխարը պահեր: Մի օր, ո՞նց ա ըլըմ նեղանըմ ա, չոմ-բախը վեր ա քցըմ ու ոչխարը բրախըմ: Մա-ղոն խռովըմ ա, քյնըմ ա, մի քանի օր ըրկըմ չի էլի, ասըմ են.

- Մաղոն կորավ, հա՛ կորա՛վ:
- Կերչը ո՞րդի դի կորչիլ: Մանըմ են, որ Մա-ղոն քյնացել ա թուրքերըմ չորան մտել:
- Զմի Սուկուչն ասըմ ա.- Ա, Մաղո, քյնացիք չորան մտա՛ր:
- Բա՛, Սուկուչ հայ, հենց գիղըմ ես թե հենց էլ մնալ դի՛: Տաշած քարը տափին կմնա՛:

15(219). ԿԱՅԻ ԹԱԼԸՑՈՒՆ ԸՔԵՄ...

Բայրամանց Մաղոն տարեն տասերկու ա-միս յա՛ չորան էր, յա՛ տըվարած: Սարըմն էլ, ինչ որ կանսիք կար, չըմնու հմար էլ փետը նա կտորեր:

- Զմի մի օր էս Սուկուչանց թալըցին² ասըմ ա.- Մաղո՛, արի փետ կտորի:
- Զա՛, կալիս եմ, էկա՛:
- Նա թալըցու հմար փետ կտորիլու վախտը, տերտերակինն էլ ընդիան.
- Մարտիրոս՛ս, Մարտիրոս ջան, արի մեզ հմար էլ փետ կտորի:
- Զա՛, տերտերակին ջան, հա՛: Էս ա, կացի թալըցուն ըքեմ, մընէ կյամ քե ըքեմ:

16(220). ՏԱՇՏԻ ՎՐԱ ԶՅԱՆՑ

Սարըմ մի օր ամբերն իրար են կալի, տը-րաքտըրաքոցն ընգըմ, գըռ հա՛ գըռ, դըմբ հա՛ դըմբ, հմի սաղ սարվորնին ճյուրն են մաղվել, թե էս ա կարկուտը կյալ դի, ապրա-նը սըրփիլ տանիլ:

Մաղոն էլ Բոշը յալիցը³ տենըմ ա, որ կնա-նիքը շատ են ընջմիշ ըլըմ, ընդիան ծեն ա տալի.

- Ախճի՛, վախիլ մի՛ք, վախիլ մի՛ք, տաշտի⁴ վրա քյնաց, վախիլ մի՛ք, տաշտի վրա քյնաց կարկուտը:

² Վաղ ժամանակ գյուղերում կնոջը դիմում էին կամ հոր անունով, կամ գյուղի անունով, որտեղից հարս էին բերել: Սուկուչանց հարսը թալա գյու-ղից էր (ծանոթ. բանահավաքի):

³ Բոշի յալ – համդամաս Ունազուլի (Դիտավան) սարում (ծանոթ. բանահավաքի):

⁴ Տաշտ - դաշտ բառի բարբառային ձևն է, տաշտ ասելով նկատի ունեն գյուղը՝ իր դաշտերով ու

¹ Բայրամանց Մաղոն նույնպես հին դիտավանցի էր, ապրել է XIX դ. վերջում XX դ. սկզբում (ծա-նոթ. բանահավաքի):

**Իրիցանց Վազգենի և այլոց զվարճա-
խոսությունները**

17(221). ՏԵՂ ԿԱ՞

Մի խումբ ռևազլվեցիք գյուղում լղանալիս են ըլել, Վազգենը՝ էն դոլիցը եկել ա ասել.

- Սպարտակ, Սպարտակ, գյուղում տեղ կա՞, ես էլ կյամ լղանամ:

18(222). ՏԱՆՁ, ԹԵ՞ ԽՆՁՈՐ

Վազգենը մտնում ա բաղը, տանձի ծառի տակին կաղնըմ ա ասըմ ա.

- Արա՛, արա՛, էս տանձքու վրա էս ինչքա՞ն խնծո՞ր կա:

19(223). ՎԱԶԳԵՆԻ ՄՈՐԻՒՆ

Մի անգամ կոլխոզնիկները դաշտում ալեն քաղիլիս են ըլըմ: Վազգենն ասըմ ա.

- Թյու՛, էս ինչքա՞ն մորի կա, էլ քաղըմ չեմ:

20(224). ԲԿԼԻԿ ԷՇԸ

Մի անգամ էլը մտնում ա Վազգենի տուն ու մոտենում հեռուստացույցին: Սարսափած Վազգենը որդուն կանչում է.

- Յուրիկ, Յուրիկ, Յուրիկ, էլը տեկվիզորը կերավ, էլը տեկվիզորը կերավ:

21(225). ԷՇԻ ՏԵՂԸ

Վազգենը էլը առաջ արած հանդիցը տուն ա կյալիս ու տղին ասըմ.

այգիներով: այս պարագայում գյուղի համար կարկուտն ավելի աղետալի կլիներ, քան սարի (ծանոթ. բանահավաքի):

¹ Վազգենի մասին զվարճախոսություններ պատմում են գրեթե բոլոր համագյուղացիները (ծանոթ. բանահավաքի):

- Յուրիկ, Յուրիկ, Յուրիկ, էլը տի թախտին, փալանը թող քյնա ըրածի:

22(226). ՌԴՄ ԿՆԻԿՆ Ա

Վազգենը ոտով Կրիվոյից կեղը պրցրանալիս ա ըլըմ, տենըմ ա՝ մի կնիկ չա՝ մաղանը ծեռին պըրցրանըմ ա: Չամաղանը ծեռից վեր ա ունըմ, քյոմակ անըմ, որ կյալիս ա Վազգենանց թուշը հասնըմ, Վազգենն ասըմ ա.

- Քույրիկ, քու չամաղանը վե կալ, ես քյնըմ եմ մեր տուն:

Կնիկն ասըմ ա.

- Ա՛ շան որթի, մինչև հմի քու կնիկն ի, հմի քույրիկ տառա՞:

23(227). ԿՈՍՏԻ՞, ԹԵ՞ ՉՈՏԿԻ

Մի օր Կոստի անունով մինը կյալիս ա վազգենանց տուն: Վազգենն ասըմ ա.

- Չոտկի ջան, Չոտկի, մի չոտկը վե կալ, շո՛րերդ կոստի:

24(228). ՈՐՆ ՈՒՋՈՒՄ ԵՔ

Մի անգամ ընկեր Չախվերդյանը² կոմերիտականներին շարք է կանգնեցնում ու ասում.

- Կոմերիտականներ, ա՛ջ, ձա՛խ:

Կոմերիտականներն ասում են.

- Ընկեր Չախվերդյան, հիմի ո՞րն անենք:

Ասում է.- Ես երկուսն էլ ասում եմ, որն ու՛զում եք, արեք:

25(229). ԿԱՐԵՎՈՐ ԶԱՐՑԸ

Ընկեր Չախվերդյանը բջիջի քարտուղար ա լինում, գնում է Վերին Աղդան ժողով անցկացնելու: Ժողովի ժամանակ երբ խոսըր տա-

² Խոսըր երկար տարիներ Ուկազուի կուսակցական բյուրոյի քարտուղար ա գյուղական խորհրդի նախագահ աշխատած Արամայիս Չախվերդյանի մասին է (ծանոթ. բանահավաքի):

լիս են ընկեր Զախվերդյանին, նա սկսում է ուրիշ հարցերի մասին խոսել:

Երբ նրան ասում են.- Ընկեր Զախվերդյան, այդ ի՞նչ ես ասում:

Ասում է.- Ես ամեն ինչ ասում եմ, ձեզ ինչ պետք ա, էն էլ հասկացեք:

26(230). ԱՊԿԱՐԻ ԾԱՆՈԹԸ

Ապկորը (Աբգար) քյոցեղ ա իրանց տուն մտել, հայլին դիմացը տըրած ա ըլել: Իրան միչին տեհել ա, գիդացել ա, թե իրան ծանոթ թուրքն ա եկել, ծեղը մեգնել ա ու ասել.

- Սալամ ալեյքում:

27(231). ՓԱԿԱԳԻԾ

Դպրոցում ուսուցիչը հայոց լեզվի ժամին անցնում ա փակագծեր թեման: Զրաչիկը դասը չի հասկանում, գալիս ա տուն հորն ասում.

- Պապա, փակագծերը ի՞նչ են:
- Տղա՛ ջան, չափար են անըմ, որ տառերը մի-չիցը փախչեն ոչ:

28(232). ՏՂԵՆ ԺԻՐ ԿԸԼԻ

Զրաչիկը շատ խեղճ ա ըլըմ, հերն ասըմ ա.- Զրաչիկ ջան, խի՞ ես ըտենց խեղճ, տղեն ժիր կըլի:

Զրաչիկը գնըմ ա գպրոց, սկսըմ ա ըրելխեքին թախիլը: Ուսուցիչը գալիս ա ասըմ.

- Զրաչիկ ջան, ի՞նչ ես ժրել, տղեն մի քիչ խելոք կըլի:

Զրաչիկն ասում է.

- Իմ հորիցը շատ գիդե՞ս, իմ հերն ասըմ ա. «Տղեն ժիր կըլի»:

29(233). ԱՍՍՍՈՆԻ ՆԱԽԱՊԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է «գատ» բառով նախադասություն կազմել:

Սամսոնը գրում է. «Աշակերտները գատ չեն աշխատել»:

30(234). ՊԱՊԱՆ ԿՐՄՐԵԼ Ա

Զրանուշը Ղուգձսին լղըցնիլիս ա ըլել, անդեր լիսերը կիսըմ հընգցրել են: Երկու մեծ կաստրուկա ա ըլել, մինը՝ փեչի վրա՝ մեչը լիքը ճուր, մինն էլ՝ ճակնդեղի ճուրը միչին փեչի կողքին: Մթան միչին Զրանուշը կաստրուկեն վեր ա կալել փեչի կողքին տըրել ու մթան միչին ճուրը լցրել Ղուգձսի վրա: Զենց լղացել ա պրծել թե չէ, լիսը վառել են: Ղուգձսը տուս ա եկել, ըրելխեքը ծըծաղել են:

- Ա՛ շան լակոտնի, խի՞ եք ծըծաղըմ:

- Պահ, պապան կրմրել ա:

31(235). ԿՐԱԿ ԴԵՍ ՌԻՏԻԼ

Սի օր, Պահլավը¹, որ արդեն բավականին ծեր էր ու վատ էր լսըմ, հանդիցը հոգնած տուն ա գալիս ու կընգանն ասըմ.

- Աստղիկ, ի՞նչ եմ ուտելու:

- Կրակ դես ուտիլ:

- Դրել ես կրակի՞ն:

ԶԱՆԱԶԱՆ

ԶԿԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

32(236). ՔՈՐԸ, ՔԱՉԱԼՆ ՈՒ ԹՈՓԱԼԸ

Սի անքամ, քորը, քաչալը, թոփալը ավտոբուսի կանգառում կանգնած են ըլում: Քորը ասում ա.

- Արա՛, հրեն, ութ համարի տրոլեյբուսը գալիս ա:

Թոփալն ասում ա.

- Եկե՛ք վազ տանք, հասնենք:

Քաչալը ասում ա.

¹ Խոսքը դիտավանդի վաստակաշատ ուսուցիչ Պահլավ Մամուլաթյանի մասին է (ծանոթ. բանահավաքի):

- Արա՛, ենքան սուտ-սուտ պա՛ններ ասեցիք, որ մազերս բիզ-բիզ կանգնեցին:

33(237). ՈՎ ՊԵՏՔ Ե ՓԱԱ ԹՈՇԱԿԻ

Մի անգամ տեղկոմի մախազահը կանչում է մարմնի օրգաններին՝ միասիտ և հայտնում է, որ թռչակի գնալու համար մի տեղ է ստացվել: Բոլորը սկսում են վիճել, թե ով պետք է գնա թռչակի:

Ուղեղն ասում է.- Ես պետք է գնամ, ամենից շատ ես եմ աշխատում:

- Էլ ո՞վ է ցանկանում,-հարցնում է տեղկոմի մախազահը:

- Ես,- ասում է սիրտը:- Ես պետք է գնամ, որովհետև գիշեր-ցերեկ աշխատում եմ:

Այդ ժամանակ մեկն ասում է.- Ե՛ս՝...

- Այդ ո՞վ ես, գլուխդ մի բարձրացրու տեսնեմք:

- Որ գլուխս կարողանայի բարձրացնել, էլ ինչու՞ պետք է թռչակի գնայի:

Կինն էլ բանկան է ցույց տալիս, որի մեջ ընդամենը երեք բրնձի հատիկ է լինում: Ամուսինն ասում է.

- Վահ, կնիկ ջան, միայն երեք անգամ ես դավաճանե՞լ:

- Ի՛հ, հողա գլխիդ, երկու անգամ, որ փլավ կերար՝ են բրինձը որտեղի՞ց էր:

36(240). ՊԼԽԻՍ ԽԵԼԸ Ա՞՞ ՄԱՍՑԵԼ

Մի կնգա մարթը մեռնում ա: Հմի դիակը դրած ա, սիրեկանը գալիս ա: Սիրեկանը գալիս ա, սիրեկանի հետ գնում ա մառանը՝ գործի անցնում: Հարևանուհին գալիս ա վրա հասնում, ասում ա.

- Սիչի,- ասում ա,- մաջալդ կտրե՞լ ա, հմանջըմ չե՞ս:

- Ի՛,- ասում ա,- գլխըմս խելք ա՞ մնացել, որ գիդենա՞մ ինչ եմ անում:

37(241). ՀԱՎԱ ՈՒՄՆ Ա

Պըլը Պուղին համ շատ խելքով ա ըլըմ, համ շատ ծաղրածու ա ըլըմ, Մելիք Հահնազարի ծառան ա ըլըմ՝ Ղարաբաղի Մելիք Հահնազարի:

Հարևանին իրար հետ կովըմ են, ընչի՞ համար՝ հավի հմար: Մելիքը, որ խելք սրած մարթ ա, կարըմ չի, որ հաշտըցնի, որ հավն ու՞մն ա էլի:

Ասըմ ա.- Էտ կըլխամեռ Պուղինն կանչեցեք կյա, տենանք՝ մա ի՞նչ կասի:

Պուղինն կանչըմ են, ասըմ են.- Պուղի՛, էս վեճ կա էլի, էս երկու հարևանի մեջ, մա ասըմ ա՛ իմն ա, մա ասըմ ա՛ իմն ա: Ո՞նց անեն:

- Պա՛,- ասըմ ա,- բա տա՞ ա տըժժորը,- ա-սըմ ա,- հավը պա՛ց չթողեք, հավը պահեցեք, ըրուգուրը թառի վախտը ինձ իմաց կանեք:

Ըրուգուրը թառի վախտը իմաց են անըմ կյալիս ա, ասըմ ա.- Հարևանների տները ո՞րն ա:

Ասըմ են.- Սինը հրե են ա, մինն էլ են ա:

Հավը պա՛ց ա թողըմ երկու հրևանի տան ա-րանքըմը:

34(238). ՅՈՒՂՆ ԷԼ ԼԱՎ Ա

Մի հայի տուն թուրքը գալիս ա հյուր: Հայը առաջին դնում ա պանիր և կարագ: Թուրքը կարագն ա անընդհատ քսում հացին ուտում:

Հայն ասում ա.

- Այ բարեկամ, պանիր էլ կեր:

Ասում ա.

- Յուղն էլ լավ ա:

35(239). ՓԼԱՎԻ ԲՐԻՆԶԸ

Ամուսինները անընդհատ իրար դավաճանում են: Մի օր որոշում են՝ ով քանի անգամ դավաճանի, մեկական բրինձ գցի բանկայի մեջ: Ամուսինը հավաքում է լուցկու տուփի մեջ և մի օր բերում է կնկան ցույց տալիս:

¹ Այս «Ես...»-ը ասելու ժամանակ բանասաց Քնարիկ Խենչյանն այնպիսի թույլ ծայրով է արտաբերում, որ դիմացիների պարզ էր դառնում, թե խոսողը մի ուժասպառ, թուլացած օրգան է (ծանոթ. բանահավաքի):

Ասըն են.- Արա՛, էտ խի՞ հավը պօց տվիր:

Ասըն ա.- Հավը ուրիշ տեղ քննալ չի, քննալ դի իրան թառի վրա: Եվ էտպես հավը քննըն ա մեկի թառի վրա:

Ասըն ա.- Մեկիք, հավը են թառի տիրոջն ա:

38(242). ՈՌՈՒԲԵՆՆ ՈՒ ՎՐԱՅԻ ԼՈՌԹԻՆ

Մի անգամ Ռուբենը թիֆլիզում գնում ա ճաշարան, մի կերած-խմած լոթի վրացի ա մտնում, ասում ա.

- Կարա՞ս հարյուր հատ խնկալի ուտես, եթե ուտես հարյուր մանեթ կտամ:

Ասում ա.- Դե կեղացի մարթ եմ, կուտեմ էլի, բայց հազար մանեթ տուր:

Թե.- Լա՛վ, հազար մանեթ կտամ:

Ասըն ա.- Մի տասը թուպեյով մի տեղ գնամ գամ:

Ասում ա.- Լա՛վ:

Մի տասը թուպեյից հետո Ռուբենը հետ ա գալի, տեսնում ա՝ լոթին դեռ սպասում ա: Հարյուր հատ խնկալի ա պատվիրում ու ուտում:

Վրացին ասում ա.-Առ, հազար մանեթը քեզ հալալ ա, բայց մի բան հարցնեմ՝ տաա թուպեով են ո՞ւր գնացիր:

Թե.- Գնացի դիմացի ճաշարանը փորցեմ, տեսնամ կարա՞մ հարյուր խնկալի ուտեմ, նոր եկա:

39(243). ՎԱՆԵՑԻ ԲԺՇԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Մի հատ վանեցի ուզըն ա բժշկի գնա, հիվանդ ա, բայց գիտի, որ փողով ա, չի գնում: Փողոցում հանդիպում ա մի բժշկի, ասում ա.

- Բժիշկ ջան, բժիշկ, որ դու հիվանդ ես ըլում, ի՞նչ ես անում:

Բժիշկն էլ ա վանեցի ըլում, չի ուզում ասի ինչ ա անում, ասում ա.

- Փռչտում եմ:

40(244). ՎԱՆԵՑՈՒ ԶԱՔՈՒԶԸ

Մի հատ վանեցի ուզըն ա յաշիկ մեխի, ըրեխին ղըրզըն ա, ասըն ա.- Քյնն հարևանի չնքուչը ուզի, պի:

Ըրեխեն քննըն ա կյալիս, ասըն ա.- Տալիս չի:

Ասըն ա.- Տրն հերն անիծած, քյնն՝ մերը հանի պի:

41(245). ՊԱՐԾԵՆԿՈՏՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Ամերիկայից մի Պոլոզ Մուկուչի նման մարդ ասում ա.

- Մի պետք ա գնամ Աովետական Միությունը էտ Պոլոզ Մուկուչին տեսնեմ:

Գալիս ա Մովետական Միությունը ուզում ա Պոլոզ Մուկուչին զարմացնի, ասում ա.

- Գիտե՞ս մեզ մոտ ծառեր կան, կատարները երկնքին են հասնում:

Պոլոզ Մուկուչն ասում է.- Զի՛ կարող պատահի:

Թե.- Դե կարող ա մի մետր երկնքից ներքև ըլի:

Թե.- Հա՛, ըստեց կըլի:

Ասում ա.- Գիտե՞ս մեզ մոտ օվկիանոսի ալիքները լուսնին են հասնում:

Թե.- Զի՛ կարող պատահի:

Թե.- Դե կարող ա մի մետր ցածր ըլի:

Թե.- Հա՛, էտ կարող ա պատահի:- Պոլոզ Մուկուչն ասըն ա.- Բա գիդե՞ս, մեզ մոտ կանայք բերանով են ծննդաբերում:

Թե.- Զի՛ կարող պատահի:

Թե.- Դե, կարող ա մի մետր ցածր ըլի:

42(246). ՊՈՒԼՈՋ ՄՈՒԿՈՒԶԸ

ԱՐԱՐԱՎԱԿՈՒՆԻՍՏ

Փարիզում տեղի է ունենում արատրակցիոնիստների համաշխարհային մրցույթ: Հայաստանից էլ Պոլոզ Մուկուչին են ուղարկում՝ մրցույթին մասնակցելու: Բոլոր նկարիչներին տեղավորում են հարմարավետ սենյակներում և մի շաբաթ ժամանակ են տալիս նկարը

պատրաստելու համար: Նկարիչները փակվում են իրենց սենյակներում և սկսում են աշխատել: Իսկ Պոլոզ Մուկուչը ամբողջ շաբաթը իր ընթիվն ման է գալիս: Սուսն են.- Այ Մուկուչ, ախր ժամանակն անցնում է, ե՞րբ պետք է նկարես:

Սուսն է.- Ոչինչ դեռ ժամանակ չատ կա:

Վերջին օրը Պոլոզ Մուկուչը մտնում է իրա սենյակը և մի պատը սևացնում: Չաջորդ օրը բոլոր նկարիչները իրենց նկարները ներկայացնում են ժյուրիին, բացի Պոլոզ Մուկուչից: Երբ ժյուրիի անդամները պահանջում են, որ Մուկուչը իր նկարը ներկայացնի, նա ժյուրիի անդամներին հրավիրում է իր սենյակը և ցույց տալիս սևացրած պատը: Ժյուրիի անդամները շատ են գլուխ ցարդում, բայց ոչ մի կերպ չեն հասկանում, թե ինչ է նշանակում այդ: Ի վերջո դիմում են Մուկուչի օգնությանը:

Սուսն են.- Բացատրի՛ր, թե ի՞նչ է քո նկարի միտքը:

Պոլոզ Մուկուչն ասում է.- Նեգրերի ապստամբությունը գիշերով:

43(247). ՊՈԼՈՋ ՄՈՒԿՈՒՇԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Պոլոզ Մուկուչը քնքնում և թիֆլիզ, քնքնում և թիֆլիզ, թիֆլիզի էտ կառավարիչին ասքնում, որ.

- Ես ըրուգուսն ըստեղ մեծ ներկայացում ունեմ, բայց մի քիչ տոմսը պետք աս պարզըրն ըլի՝ արժեքը, փողը:

Էտ աս պիրքն աս տոմսը տասը ռուբլի վերոշնքն են, նկարը-պանը հանած աս, թե էտ ինչ ներկայացում ունի, ըստովը տըրած, բոթիկեն էլ ըստովի վրա տըրած, ինքը տկոթված, պետք է մտնի բոթիկեն:

Էտ աս տոմսը հըվաքըն են, քաղաքի ժողովուրթը էտ պանը տենքն աս, չիմ կյալիս են լըցվըն, հնարավորութիւն չի ըլըն շենքերընք: Մեղըցըքերը, պանը կյալիս են հետերնուն օքնըն, ասքն են.

- Ինչքան շենքը տեղվարքն աս՝ տեղվարքն ցեք, մյուս ըրուգուսն էլ են մնացածնին կկան:

Ըըցվըն են ըռիխըն հետ, տոմսը տասը ռուբլի հվաքըն, մըտուրու գումար աս հվաքըն, մի կես ժամից հետո պենի վրա արթեն պաղրաստըլըն աս, կես ժամից հետո տուս աս կյալի, ժողովութիւն իրեք անքան կյուլիս աս տալի, նստած աս խալիք: Էտ աս նվագախումբը սկսքն են նվագը, շարունակըն են, տա պտիտ աս կյալի: Ժողովութթը սրտատրոփ մտիկ են անքն, որ տա իրես բոթիկեն դի մտնիլ, բոթիկի կըլխովը մի երկու-իրեք անքան պտիտ աս կյալի, միտ մի ոտն աս մեզընք, միտ մի ոտն աս մեզընք, միտ էլ երկու ծեռը տըրքն աս ամեքը մի ղոլից ընգաճիւն, կյուլիս հա՛, հա՛ հես մի դի մտնիլ, դե նա՛ ո՞նց դի բոթիկեն մտնիլ՝ են հերվարա, հսկա մարքը: Որ շատ էնքան պտիտ աս կյալի, բըզարքն աս, հանգը կտըն աս, պետիս ասքն աս.

- Ընգըր պետ,- ասքն աս,- ո՞ր շան տղեն աս գժվել մտնի էս բոթիկի մեջը: Ո՞վ կարա, ով որ կարքն աս, թող կյա մի մտնի:

Փողը հվաքըն աս, վե կենքն հա քյնքն աս: Ո՞նչ բոթիկեն աս մտնքն, ո՞նչ էն աս, վերչացըն աս տըրածնով:

44(248). ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սի անգաճ՝ տրանսպորտում, մի տղա մի աղջկա աս հանդիպում ու ձեռքից պայուսակը գողանում աս: Աղջիկը նայում աս տեսնում՝ պայուսակը չկա: Էտ տղեն իջնում աս տրանսպորտից, հանկարծ նկատում աս, որ շալվարը չկա: Նորից հետ աս բարձրանում տեսնում աս՝ իրա շալվարը էտ աղջկա ձեռին, ասքն աս.

- Էտ իմ շալվարն աս:

Սքն աս.- Բա էտ էլ իմ պայուսակն է:

- Վա՛հ,- ասում աս, ուրեմն երկուսս էլ գող ենք, արի՛ իրար հետ ամուսնանանք:

Իրար հետ ամուսնանում են: Ունենում են մի երեխա: Երեխան որ ծնվում աս, մի ծեռը փակ է լինում: Տանում են բժշկի, հետո մի կերպ էտ երեխի ծեռը բացում են, տեսնում են՝ մի մատանի երեխի ձեռին: Սուսն են.

- Էս որտեղի՞ց:

Երեխեն ասում աս.

- Ծնվելու ժամանակ բժշկի ձեռիցն եմ հանել:

Մուլա Նասրեդին

45(249). ՄՈՒԼԼԱ ՆԱՍՐԱԴԻՆԻ ԱՅԾԸ*

Մուլա Նասրադինը իրան կնոջ հետ մի անբամ իրանց տանը մի ըրուզու գյափ եմ անըմ: Կինն ասըմ ա.- Այ մարթ, տեղաշոր չունենք, սամսեն տկոր եմք, մի հատ էժ ունենք, էժը վերցրու տար շուկա, բազարը տար, ծախի, համ տեղաշոր առ, համ մի էժ:

Վեր ա ունըմ էժը բաշըմ քյըն՝, քյընըմ ա ճանապարհի կիսին մթնըմ ա: Մի գյուղի վրա թեքվըմ ա, էտ գյուղըմ, տու մի ասիլ, մի տան մի հըրսանիք կա: Էտ հըրսանաթիրունչը մենժ կալ ա լինըմ, կալի տակին՝ տաշմաննոց, մենժ մարաք, քյընըմ ա մտնըմ էտ մարաքի մենչը, էժն էլ բաշըմ մի բուրքըմ նստըմ, հըրսանիքը աժըմ են, հըրսանիքը, քյընըմ ա ժամանակը հասնըմ, վերչանըմ ա: Հարսի ու թաքավորի տեղը տանըմ են էտ մարաքըմ շինըմ, մի էրկու քահեկ տանըմ են ըտեղ սրվըմ, տեղ սարըմ, տեղաշորը փոշըմ, ճաշը-մաշ պիրըմ նիանց, հարսին ու թաքավորին պիրըմ նստըցըմ: Հենց որ ճաշն ուտըմ են պրծնըմ, հմի էլ սկսըմ են իրար հետ գրից անըմ: Աղջիկն ասըմ ա.

- Ո՞նց ըլավ, որ տուն ինձ սիրեցիր, ուզեցիր:

Ասըմ ա.- Մտիկ արի տեհա՝ այսինչ հըրսնքըմ սեն լավ պար ես կյալիս, այսինչ տեղը սեն լավ երքըմ ես, ես էլ են ա հա՛, սիրեցի:

Հմի էլ տղեն ասեկանն ա իրցըմ.- Բա տու՝ ինձ ո՞նց:

Ասըմ ա.- Ես էլ տեհա՝ սեն ծի ես քընը:- Պլետը ընդեղ յափնջու կշտին կախ արած ա ըլըմ, պլետը վեր ա ունըմ.- սեն տղերանցը քընչքընչի ես անըմ.- պլետը պտտըմ:

Պլետը սեն պտտիլիս տեղը մթնըմ պլետի ծերը իժի դղին ա դիպըմ թե չէ, էժը բղավըմ ա, հարսն ու թաքավորը տուս են տառնըմ փախըմ, քյընըմ: Մուլեն կյալիս ա դվերըմ, տե-

ղաշորը ծալըմ, կըլըմ, շլակըմ, էժն էլ եղնեն բաշըմ, քյընըմ իրանց տուն: Տրանով էլ վերչացըմ ա, համ տեղաշորը պիրուց, համ էժը:

46(250). ՄՈՒՆԱԹԻ ՏԱԿ ԶԵՆԳՆՈՂ ՄՈՒԼԵՆ

Մուլեն գետի մեջ տեղը կանգնած սրոցին թքում ա, գերանդին սրում:

Ասում են.- Մուլա, քրի մեջին կանգնել ես, սրոցին թքում ե՛ս:

Ասում ա.- Զեն ուզում ուրիշի մունմաթի տակ ընգնեմ:

47(251). ՄՈՒԼԼԱ ՆԱՍՐԱԴԻՆԻ ՓԱՓԱԽԸ*

Մուլա Նասրադինը մի փափախ ա առած ըլըմ, փափաղը կըլիխն տրած կեղամենչն ա քյընըմ, աշխադանքի ա քյընըմ: Էն ա մի հինգ-տասն օր տենց անց ա կենըմ, ով տենըմ ա.

- Հնիավոր ըլի՛, շնիավոր ըլի՛:

Ասըմ ա.- Սեն ըլավ ո՛չ: Լավ ա, էն ա պիրեմ մհետ մի պաղրաստութն տենամ, ժողովորթին բաժուլզ հվաքեմ, մի անքամ ասեն շնիավոր ըլի, էն ա հա՛ պրծնեմ:

Մի կով ա ունենըմ, պըրցըմ ա, կեղիցը պաճըրը մի մեծ խաչ ա ըլըմ, խաչի առաջին տանըմ մորթըմ, ուտըմ են, խմըմ, հա՛ հրես ա-սիլ դեն շնիավոր ըլի՛, մեկը փափաղը վեր ա ունըմ ուրիշ տեղով փախըմ: Նա դյեր ա քյընըմ, Մուլա Նասրադինը դվեր ա կյալի:

- Մուլա՛, դյեր տարա՛վ, դյեր տարա՛վ:

Նա հլե դըբա կյրեզմանուտն ա կյալի, ասըմ ա.- Դըվերն ուզըմ ա քյնա, վերչը ըստեղ դի կյալ:

48(252). ԼՐԶԱՍԻՆԴ ՄՈՒԼԱՆ*

Մուլեն ետ շատ տիե ծըծղացըմ ա ժողովորթին, խնթըմ են, որ.

- Սօր մի ազդի մեյիդ կա, ծիծաղելու պանչասես, ժողովորթը ծըծաղի ոչ, ինչ ուզես՝ կտանք:

- Ի՞նչ կտաք, որ տհե պան չանեն, ժողովուրդ:

Թե ասը են.- Ի՞նչ ես ուզում:

- Յեղ ենք ուզում:

Ասը են.- Մարթա երկու հարիր գրամ յեղ կտանք:

Եվ համան են առնըմ էտ մարթիք, որ տալ դեն, հենց էնքան կենըմ ա՝ մեյիղը տուս են պիրըմ, մի կենտորոնով տանիլիս տեղը, մի թագի ջուլըմ ա ու թշերքը թցըմ վրեն, քյնըմ առաջնին:

- Դե հագիր հըվաքված եք, իմ յեղը տվեք:

49(253). ՄՈԼԼԱ ՆԱՍՐԱԴԻՆԻ ՋԱԳԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մոլլա Նասրադինը ճամփեն մի քյնալիս տեղը օքմի չի ըլըմ հետը: Քյնըմ ա մի արխի վրով թռչըմ են դղը, ասըմ ա.

- Այ քահելություն հա՛:

Եդ ա մտիկ անըմ տենըմ մարթ չկա, ասըմ ա.

- Այէ՛, քահել վախտն էլ չի մի պան է՛:

50(254). ՄՈԼԼԱ ՄԱՍՐԱԴԻՆԻ ԿՆԻԿԸ

Մոլլա Մասրադինին ասել են.- Կնիկըտ ման ա կյալի:

Ասել ա.- Ա՛ Ժեր տունը շինվի, էտ ո՞նց ա ման կյալի, որ ըրուգունը մեր տուն չի կյալի:

51(255). ՄՈԼԼԱ ՆԱՍՐԱԴԻՆԻ ԽՈՐԱՍԱՆԿ ԿԻՆԸ

Մոլլա Նասրադինը իրեք հատ կով ա ունենըմ: Մինը աղաք անըմ ա տանըմ բազարը, մի իրեք-չորս լոթի տղերք աղաքը կտորըմ են:

- Մոլլա Նասրադին, էս էծը ո՞ւր ես տանըմ:

Թե.- Այ մարթ, էծ չի,- ասըմ ա,- կով ա:

- Այ մարթ, չէ՛:

Կերչը մոլլա Նասրադինին խափըմ են, որ էծ ա: Իծի տեղ կովը ծախըմ ա, փոխ-փոշման կյալի կնոջ կուշտը:

Ասըմ ա.- Այ մարթ, կովը ծախեցի՞ր:

Թե ասըմ ա.- Այ կնիկ, էծն եմ տարած ըլել, կովը չի լել:

Թե.- Ա՛ քու տունը քանդվի, ո՞նց ես էծը տարել, որ կովերից մինը կա ոչ:

Քյնըմ ա մտիկ անըմ տենըմ՝ շիրակ, կովն ա տարել, էծը չի տարել: Մյուս անքամն էլ կինն ասըմ ա.- Այ մոլլա Նասրադին,- ասըմ ա,- ես հմի գալ տեն,- ասըմ ա,- իրար հետ կնանք, տենանք՝ էտ ո՞վ են քե խափողնին:

Կընգա հետ, կնիկն էլ լավ հաքնվըմ ա, իրան լավ պուրդավատ անըմ, քյնըմ, ճամփա ընգըմ: Էլետ մույն լոթեքերը կյալիս են աղաքը կտորըմ:

- Մոլլա Նասրադին, էտ էծն ո՞ւր ես տանըմ:

Թե ասըմ ա.- Այ մարթ, էծ չի, կով ա:

Ասըմ ա, կյալիս ա.- Այ մոլլա Նասրադին, էս կնիկն ո՞վ ա:

Թե.- Այէ՛, էս կնիկն էլ իմ հարևանի կնիկն ա:

- Այ քիրա, ծանոթանանք:

Ասըմ ա.- Կովը հըլա առեք:

Ասըմ են, ժամադրըմ են, որ կովն էլ են առնըմ, են Ժերքի ծախած իծի հախն էլ են առնըմ, որպես էծ ա ծախել կովը: Կալիս են տուն, հա՛: Մոլլա Նասրադինի կնիկը ենգես մտածըմ ա, որ սրանց ամբողջ իրանց կովի, իծի հախը տասն անքամ ավել տան: Պերըմ ա հերթագրըմ յոթ հոքուն, յուրաքանչյուրին տարերը ժամի: Ժամադրվըմ, կալի լավ տները պաղրաստըմ (ամեն ժամին էլ), մոլլա Նասրադինն ասըմ.- Մոլլա Նասրադին, տու թաքնվի, ինչ հըղաղի են մի ժամադրած մարթս կա, տու տուս արի, ես տանիլ դեմ քցիլ ներքի պաղ-վալը:

Էտ ա մոլլա Նասրադինը ճամփա ա պա-հըմ, մի հատ ժամադրվածը կալի տուն մտնըմ, մի քիչ վախտից եղը Մոլլա Նասրադինը տուն ա մտնըմ

- Այ կնիկ, էտ ի՞նչ ա:

Թե.- Ապասի՛, սպասի՛:

Նա ներքև ա իջացնըմ էտ մարթին: Բոլորին հերթականությամբ՝ կալիս են, մոլլա Նասրադինի կինը ածըմ ա բոլորը պաղվալը, ինչ որ փող ունեն, ինչ որ Ժեռեռնուն պան կա, կարո-

դուքին կա, չիմ վերցնեմ, տկլոր, անըմ մարա-
քը:

Մուլա Նասրադինն ասըմ ա.- Այ կնիկ, մեր
մարաքը սօր վառիլ դեմ, մեր ներքի տները:

- Այ մարթ,- ասըմ ա,- վառիլ մի, կացի տե-
նանք հլա:

Ասըմ ա .- Չէ՛, միտքս փոխվել ա, սալոմ
պի, խոտ պի, վառըմ եմ , այ կնիկ:

Ասըմ ա.- Կացի տենանք մեր հավերը միչին
են, եղով:

Տուս ա ըլըմ, քյնըմ տենըմ, որ էտ յոթ
մարթն էլ տկլոր ըտի ա:

Ասըմ ա.- Յա՛, կովը իծի հետ առնողնին
տուք իք, դե քյնացեք տհե տկլոր, ժողովուրթը
թող ծեզ վրա ծըծաղի: